ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
22 նոյեմբերի 2022 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/3
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 55 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Տիգրան Ավինյանը, Սուրեն Գրիգորյանը, Գևորգ Սիմոնյանը, Ս. Մաչյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սեյրան Մեջլումյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Սուսաննա Գրիգորյանը, Կորյուն Մկրտչյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի պաշտոնակատար Արման Ջհանգիրյանը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 11.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 11.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 41, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ օրակարգի նախագծի 8-րդ «Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» հարցը տեղափոխում է օրակարգի նախագծի՝ որպես 21-րդ հարց:

Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ 2022 թվականի նոյեմբերի 22-ի նիստի օրակարգի նախագծից հանում է 13-րդ՝ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» (Ա. Խաչատրյան փ. 30/4 հասցե), 14-րդ՝ «Փոխանակությանը համաձայնություն տալու մասին», 18-րդ՝ «Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ» և 21-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի հ.651-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցերը:

Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը հանդես եկավ ելույթով և առաջարկեց 2022 թվականի նոյեմբերի 22-ի նիստի օրակարգի նախագծից հանել 21-րդ՝ «Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» հարցը հանել օրակարգից:

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին:
5. Հուշատախտակների տեղադրման մասին:
6. «Երևանի հ.37 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:
7. Երևան քաղաքում Մարիա Յակոբսենի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
8. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:
9. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
10. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
11. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
12. Երևան համայնքի սեփականություն համարվող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0 քմ մակերեսով անավարտ բնակելի տունը և դրա զբաղեցրած 612.7 քմ մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով օտարելու (նվիրելու) մասին:

13. ԵՔ-ԷԱՃԱԾՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ:

14. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N629-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

15. Երևան համայնքի սեփականություն համարվ ող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը անհատույց օտարելու մասին:

16. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

17. Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:

18. «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 9-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ,
2. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը ու աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Ա. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

2. Որոշման 2-րդ մասի «5,217,542.5» թիվը փոխարինել «6,443,531.2» թվով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ,
2. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

4. ԼՍԵՑԻՆ - Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռք բերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել աուդիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

5. ԼՍԵՑԻՆ - Հուշատախտակների տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Արթուր Իսպիրյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հուշատախտակների տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն.

1) ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, հայ անվանի քանդակագործ Հովհաննես Բեջանյանի և նրա որդու՝ անվանի քանդակագործ Դավիթ Բեջանյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.5 հասցեում փակցնելու վերաբերյալ,

2) Հայ անվանի դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Ղարաբեկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սպենդիարյան փողոց հ.5 հասցեում փակցնելու վերաբերյալ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ - «Երևանի հ.37 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Սարգսյանը և աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ ««Երևանի հ.37 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևանի հ.37 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ բանաստեղծ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վահագն Դավթյանի անվամբ՝ «Երևանի Վահագն Դավթյանի անվան հ.37 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

7. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքում Մարիա Յակոբսենի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Մարիա Յակոբսենի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արման Անտոնյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ,

2. Լուսինե Գևորգյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Ս. Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 51-րդ փողոցն անվանակոչել դանիացի միսիոներ Մարիա Յակոբսենի անվամբ՝ «Մարիա Յակոբսեն փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

8. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ
4. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Գրիգորյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ

կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար գրանցվել են ավագանու 9 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
3. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Դավիթ Խաժակյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
5. Անի Խաչատրյան - Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
6. Մարկոս Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
7. Արմեն Գալջյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար
8. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
9. Սաթենիկ Մկրտչյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Տ. Ավինյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հավելվածի 20-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ.

«Օրակարգի նախագծում ներառված հարցերը Քաղաքապետի կողմից նշվում են որպես զեկուցվող կամ չզեկուցվող՝ կախված հարցի քննարկման անհրաժեշտությունից:»,

2) հավելվածի 104-րդ կետի 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ.

«Նիստը վարողի, խմբակցության ղեկավարի առաջարկությամբ և Ավագանու որոշմամբ ընդմիջում կարող է չանցկացվել կամ անցկացվել այլ ժամերին և տևողությամբ, ինչպես նաև կարող է անցկացվել լրացուցիչ ընդմիջում:»,

3) հավելվածի 114-րդ կետում.

ա. 3-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) քվորումի առկայության դեպքում՝ նիստը վարողը հրապարակում է Ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ օրակարգային չզեկուցվող հարցերը և զեկուցվող հարցերի քննարկման հաջորդականությունը.»,

բ. 4-րդ ենթակետում «օրակարգի» բառից հետո լրացնել «այդ թվում՝ չզեկուցվող հարցերը զեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն կամ զեկուցվող հարցերը չզեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն քննարկելու,» բառերը,

գ. 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) հերթական նիստի օրակարգի հաստատումից հետո, առանց զեկուցման և սույն կետի 6-12-րդ ենթակետերով սահմանված գործողությունների իրականացման, առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը.»,

դ. լրացնել 5.1-ին և 5.2-րդ ենթակետեր.

«5.1) օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քվեարկվում են մեկ քվեարկությամբ, ընդ որում՝ Ավագանու անդամի կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկությունը համարվում է համապատասխանաբար կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկված յուրաքանչյուր նախագծին:

5.2) Չզեկուցվող հարցերի քվեարկությունից հետո զեկուցվող հարցերը քննարկվում են ըստ օրակարգում դրանց ներկայացման հաջորդականության: Քաղաքապետի պահանջով իր ներկայացրած նախագիծը կարող է քննարկվել արտահերթ: Յուրաքանչյուր հարցի քննարկումը սկսվում է նիստը վարողի կողմից հարցի ներկայացմամբ, ինչպես նաև դրա վերաբերյալ հիմնական և հարակից զեկուցողների անուն-ազգանունների հայտարարմամբ:».

4) հավելվածը լրացնել նոր 117. 1. -ին կետով.

«117.1. Ավագանու արտահերթ նիստերի օրակարգում ներառված հարցերը ավագանու որոշմամբ կարող են քննարկվել չզեկուցվող հարցերի սույն կանոնակարգով նախատեսված ընթացակարգին համապատասխան:»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 30, դեմ՝ 15, ձեռնպահ՝ 8

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

9. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ն.Չարբախ փողոցի հ.129 հասցեում գտնվող ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Կարեն Թադևոսյանին և Արթուր Առաքելյանին պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03032022-01-0292 վկայական) 2593.1քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

10. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային

նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Գ-1 թաղամասի հ. 42/3 և հ.8/40 հասցեների հարևանությամբ գտնվող 11.25 քմ հողամասը փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

11. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
3. Մարկոս Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոցի հ.22/10 և հ.22 հասցեներում գտնվող «ԳԱՍՊԱՐՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար 0.634967հա և 0.426338հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակություններն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

12. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0 քմ մակերեսով անավարտ բնակելի տունը և դրա զբաղեցրած 612.7 քմ մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով օտարելու (նվիրելու) մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Արմեն Ներսիսյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0 քմ մակերեսով անավարտ բնակելի տունը և դրա զբաղեցրած 612.7 քմ մակերեսով հողամասն անհատույց սեփականության իրավունքով օտարելու (նվիրելու) մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթներով հանդես եկան Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Տ. Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Վիլնյուսի փողոցի հ.64/6 հասցեում գտնվող 159.0քմ մակերեսով անավարտ բնակելի տունն ու դրա զբաղեցրած 612.7քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20062022-01-0230 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Միհրան Գասպարյանին, Լուսինե Չիլ-Գևորգյանին, Էվելինա Ղազարյանին, Գոռ Գասպարյանին և Էդմոնդ Գասպարյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

13. ԼՍԵՑԻՆ-ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի պաշտոնակատար Արման Ջհանգիրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 3 անդամ.

1. Լուսինե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի պաշտոնակատար Ա. Ջհանգիրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան–Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. ԵՔ-ԷԱՃԱՇՁԲ-22/8-1 ծածկագրով գնման ընթացակարգը համարել ամբողջությամբ չկայացած՝ գնման պահանջը դադարելու հիմքով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

14. ԼՍԵՑԻՆ- Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N629-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Արմեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N629-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» N 629-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետը «լուսավորության համակարգը» բառերից հետո լրացնել «և 5 բազմաբնակարան շենքերի ներշենքային, աստիճանավանդակային հատվածներում տեղադրված լուսադիոդային լուսատուները, ինչպես նաև բակային լուսավորության համակարգը» բառերով, իսկ «սպասարկումն իրականացնող» բառերից հետո «41» թիվը փոխարինել «42» թվով,

2) Որոշման հավելվածի 29-րդ տողի 9-րդ սյունյակի «Դավթաշեն 23» բառերը փոխարինել «Դավթաշեն 3» բառերով, իսկ 39-րդ տողի 9-րդ սյունյակի «Դավթաշեն 23» բառերը փոխարինել «Դավթաշեն 4/Ա-1» բառերով,

3) Որոշման հավելվածը լրացնել 98-ից 102-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի փոփոխության դեպքում Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N629-Ա որոշումից ծագող իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են բազմաբնակարան շենքը կառավարող նոր ընտրված մարմնին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

15. ԼՍԵՑԻՆ- Երևան համայնքի սեփականություն համարվ ող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
2. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
3. Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Ա. Բաբաջանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվ ող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լուսինե Գևորգյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը (սեփականության վկայական թիվ 2461524) անհատույց օտարել (նվիրել) Հերմինե Յուրայի Բարսեղյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

16. ԼՍԵՑԻՆ-Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Սաթենիկ Մկրտչյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Տ. Ավինյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Որպես նվիրատվություն ընդունել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

17. ԼՍԵՑԻՆ-Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
2. Պավել Սարգսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Մարկոս Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
4. Արման Անտոնյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Սաթենիկ Մկրտչյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալներ Տ. Ավինյանը, Ս. Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդական Կ.Արեյանը և աշխատակազմի իրավաբանական վարչության վարչության պետ Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Նաիրա Խառատյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Սաթենիկ Մկրտչյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Արման Բաբաջանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Նուարդ Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

18. ԼՍԵՑԻՆ- «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Արմեն Գալջյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

4. Տիգրան Գալստյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Սաթենիկ Մկրտչյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Դիանա Քերոբյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Լևոն Զաքարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և քաղաքապետի տեղակալ Գ. Սիմոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ ««Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու, «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներդրումներ կատարելու առաջարկին հավանություն տալու և Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի N112-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ-Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

1. **ՈՐՈՇՎԵՑ** – 1) «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Սահմանել, որ «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

4. Հավանություն տալ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունում ներդրումներ կատարելու նոր առաջարկին՝ համաձայն հավելվածի:

5. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի ««Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման

հանձնելու մասին» հ.112-Ա որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ՝ նոր խմբագրությամբ.

«4. Սահմանել, որ պայմանագրով հավատարմագրային կառավարչի կողմից ստանձնած երկարաժամկետ ներդրումային պարտավորությունների իրականացման 5-րդ տարում դրանք տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված չափով և ժամկետում լիովին ու պատշաճ կատարելու պարագայում՝ Ընկերության Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագիրը համարվում է երկարացված 17 տարի ժամկետով:»

6. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել համաձայնագիր՝ Երևան քաղաքային համայնքի և «Մաքս Մեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2014 թվականի հունիսի 9-ին կնքված բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրում ավագանու որոշումից բխող փոփոխությունները կատարելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան